ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"05" նոյեմբերի 2025թ. N 52 -Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի N 26-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, <<Պետական կառավարման համակարգի մարմինների մասին>> օրենքի 7-րդ հոդվածի 12-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 13-րդ ենթակետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարմանը և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ Ա. Գիլոյանի 2025 թվականի նոյեմբերի 3-ի N Ն/14. 1/5072-2025 և նախարարի մամուլի քարտուղար Ս. Հարությունյանի 2025 թվականի նոյեմբերի 4-ի N Ն//5073-2025 զեկուցագրերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 15-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հաստիքացուցակը հաստատելու մասին>> N 26-Լ հրամանով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելվածի <<**3. Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչություն**>> բաժնի ա. <<Խորհրդական՝ առանձին գործառույթներ հանձնարարող 2>>

բառերը փոխարինել <<Խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող 1>> բառերով,

բ. <<ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1-2 3>> բառերը փոխարինել <<ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1-1 2>> բառերով,

գ. <<3. ԸՆԴԱՄԵՆԸ 13>> բառերը փոխարինել <<3. ԸՆԴԱՄԵՆԸ 12>> բառերով:

2) Հավելվածի <<**16. Հասարակայնության հետ կապերի բաժին>>** բաժնի ա. <<Խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող 1>> բառերը փոխարինել <<Խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող 2>> բառերով,

բ. <<ԸՆԴԱՄԵՆԸ՝ 4-1 5>> բառերը փոխարինել <<ԸՆԴԱՄԵՆԸ՝ 4-2 6>> բառերով:

11/5/2025

X

ՔՐԻՍՏԻՆԵ ՂԱԼԵՉՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: GHALECHYAN KRISTINE 5504770076 **/Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

ք. Երևան